ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ, ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

№ ՀՀ-ՏԿԶՆ-ԳՀԾՁԲ-18/1-7/6

ք. Երևան «17» մարտի 2018թ.

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Մ.Բաղդասարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Մանվել Ջալավյան Ա/Ձ-ն (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գրասենյակային, համակարգչային սարքերի ընթացիկ սպասարկման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 800000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[1]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

---

[1] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	Մանվել Ջալավյան Ա/Ձ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Մոսկովյան 25, 3/1 տարածք
Կառավարական տուն 3	«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 2050032155921001
Հ/Հ 900011018513	ՀՎՀՀ 82934656
ՀՎՀՀ 02578338	
Աշխատակազմի ղեկավար՝	Ա/Ձ՝
_____ Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	_____ Մ.ՋԱԼԱՎՅԱՆ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են մտցվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«17» մարտի 2018թ. կնքված
№ ՀՀ-ՏԿԶՆ-ԳՀԾՁԲ-18/1-7/6 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
2	50771100/1	*Ներկայացվում է կից	դրամ	200000	1	ք.Երևան, Կառավարական տուն 3, 6-րդ հարկ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը:
3	50311240/1		դրամ	400000	1		
4	50311240/1		դրամ	100000	1		
6	50731100/1		դրամ	100000	1		

***Տեխնիկական բնութագիր**

Չափաբաժնի համարը	Ծառայությունների անվանումը	Գին**
2	**Անխափան սնուցման սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություն**	
	2.1 Դիագնոստիկա	600
	2.2 Ղեկավարող սալիկի վերանորոգում (ներառյալ պահեստամասերը)	2000
	2.3 Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ 5Ա	2000
	2.4 Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ 7Ա	8000
	2.5 Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ 12Ա	9500
	2.6 Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ 18Ա	14500
3	**Լազերային տպիչների վերանորոգման և պահպանման ծառայություն**	
	3.1 Դիագնոստիկա	1000
	3.2 Պրոֆիլակտիկա	2100
	3.3 Լիցքավորում լազերային տպիչի ներառյալ տոները HP LJ 1320	1500
	3.4 Լիցքավորում լազերային տպիչի ներառյալ տոները HP LJ P2055d	1500
	3.5 Լիցքավորում լազերային տպիչի ներառյալ տոները Canon MF 3220	1500
	3.6 Լիցքավորում լազերային տպիչի ներառյալ տոները Canon I Sensys MF231 Laser Jet	1500
	3.7 Լիցքավորում լազերային տպիչի ներառյալ տոները HP Laser Jet Pro MFP M 130a	1500
	3.8 Թմբուկի փոխարինում ներառյալ լիցքավորումը HP 1320	2100
	3.9 Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման HP 1320	600
	3.10 Թմբուկի փոխարինում ներառյալ լիցքավորումը Canon 3220	2100
	3.11 Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման Canon 3220	600
	3.12 Թմբուկի փոխարինում ներառյալ լիցքավորումը HP LJ P2055d	2100
	3.13 Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման HP LJ P2055d	600
	3.14 Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման Canon I Sensys MF231 Laser Jet	600
	3.15 Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման HP Laser Jet Pro MFP M 130a	600
	3.16 Կարատրոնի փոխարինում առանց լիցքավորման HP 1320	300
	3.17 Կարատրոնի փոխարինում առանց լիցքավորման Canon MF 3220	300
	3.18 Կարատրոնի փոխարինում առանց լիցքավորման HP LJ P2055d	300
	3.19 Կարատրոնի փոխարինում առանց լիցքավորման Canon I Sensys MF231 Laser Jet	300
	3.20 Կարատրոնի փոխարինում առանց լիցքավորման HP Laser Jet Pro MFP M 130a	300

	3.21 Մագնիսական լիսեռի փոխարինում առանց լիցքավորման HP LJ 1320	400
	3.22 Մագնիսական լիսեռի փոխարինում առանց լիցքավորման Canon MF 3220	400
	3.23 Մագնիսական լիսեռի փոխարինում առանց լիցքավորման HP LJ P2055d	400
	3.24 Մագնիսական լիսեռի փոխարինում առանց լիցքավորման Canon I Sensys MF231 Laser Jet	400
	3.25 Մագնիսական լիսեռի փոխարինում առանց լիցքավորման HP Laser Jet Pro MFP M 130a	400
	3.26 Մայրական տպասալի փոխարինում ներառյալ մայրական տպասալը HP LJ 1320	100
	3.27 Մայրական տպասալի փոխարինում ներառյալ մայրական տպասալը Canon MF 3220	100
	3.28 Մայրական տպասալի փոխարինում ներառյալ մայրական տպասալը HP LJ P2055d	100
	3.29 Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում ներառյալ ռետինե գլանը HP LJ 1320	100
	3.30 Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում ներառյալ ռետինե գլանը Canon MF 3220	100
	3.31 Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում ներառյալ ռետինե գլանը HP LJ 2055d	100
	3.32 Վառարանի փոխարինում ներառյալ վառարանը HP LJ 1320	30
	3.33 Վառարանի փոխարինում ներառյալ վառարանը Canon MF 3220	30
	3.34 Վառարանի փոխարինում ներառյալ վառարանը HP LJ P2055d	30
	3.35 Լազերի փոխարինում ներառյալ լազերը HP LJ 1320	30
	3.36 Լազերի փոխարինում ներառյալ լազերը Canon MF 3220	30
	3.37 Լազերի փոխարինում ներառյալ լազերը HP LJ P2055d	30
	3.38 Սկաների բլոկի փոխարինում ներառյալ սկաների բլոկը Canon MF 3220	300
4	**Պատճենահանող սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություն**	
	4.1 Դիագնոստիկա սև	2100
	4.2 Պրոֆիլակտիկա սև	3000
	4.3 Վերածրագրարում	30
	4.4 Լիցքավորում ներառյալ տոներ Canon 7161	3000
	4.5 Լիցքավորում ներառյալ տոներ Canon iR2016	3500
	4.6 Լիցքավորում ներառյալ տոներ Canon iR2230	3500
	4.7 Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ վառարանի ռետինե լիսեռ Canon 7161 կամ համարժեքը	1500
	4.8 Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ռետինե լիսեռ Canon iR2016 կամ համարժեքը	6200
	4.9 Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ռետինե լիսեռ Canon iR2230 կամ համարժեքը	7000
	4.10 Վառարանի թերմոժապավենի փոխարինում ներառյալ վառարանի թերմոժապավեն Canon 7161 կամ համարժեքը	3000
	4.11 Վառարանի թերմոժապավենի փոխարինում ներառյալ Վառարանի թերմոժապավեն Canon iR2016 կամ համարժեքը	4500
	4.12 Վառարանի թերմոժապավենի փոխարինում ներառյալ Վառարանի թերմոժապավեն Canon iR2230 կամ համարժեքը	4500
	4.13 Drum Unit-ի փոխարինում ներառյալ Drum Unit-ը Canon 7161 կամ համարժեքը	200
	4.14 Drum Unit-ի փոխարինում ներառյալ Drum Unit-ը Canon iR2016 կամ համարժեքը	200
	4.15 Drum Unit-ի փոխարինում ներառյալ Drum Unit-ը Canon iR2230 կամ համարժեքը	200
	4.16 Վառարանի թերմոէլեմենտի փոխարինում ներառյալ Վառարանի թերմոէլեմենտ Canon 7161 կամ համարժեքը	100
	4.17 Վառարանի թերմոէլեմենտի փոխարինում ներառյալ Վառարանի թերմոէլեմենտ Canon iR2016 կամ համարժեքը	200
	4.18 Վառարանի թերմոէլեմենտի փոխարինում ներառյալ Վառարանի թերմոէլեմենտ Canon iR2230 կամ համարժեքը	200
	4.19 Թմբուկի փոխարինում ներառյալ թմբուկ Canon 7161 կամ համարժեքը	3000
	4.20 Թմբուկի փոխարինում ներառյալ թմբուկ Canon iR2016 կամ համարժեքը	4800
	4.21 Թմբուկի փոխարինում ներառյալ թմբուկ Canon iR2230 կամ համարժեքը	500
	4.22 Մաքրող դանակի փոխարինում ներառյալ Մաքրող դանակ Canon 7161 կամ համարժեքը	100
	4.23 Մաքրող դանակի փոխարինում ներառյալ Մաքրող դանակ Canon iR2016 կամ համարժեքը	100
	4.24 Մաքրող դանակի փոխարինում ներառյալ Մաքրող դանակ Canon iR2230 կամ համարժեքը	100

	4.25 Մագնիսական լիսեռի փոխարինում ներառյալ Մագնիսական լիսեռ Canon 7161 կամ համարժեքը	100
	4.26 Մագնիսական լիսեռի փոխարինում ներառյալ Մագնիսական լիսեռ Canon iR2016 կամ համարժեքը	100
	4.27 Մագնիսական լիսեռի փոխարինում ներառյալ Մագնիսական լիսեռ Canon iR2230 կամ համարժեքը	100
	4.28 Մայրական տպասալի փոխարինում ներառյալ Մայրական տպասալ Canon 7161 կամ համարժեքը	100
	4.29 Մայրական տպասալի փոխարինում ներառյալ Մայրական տպասալ Canon iR2016 կամ համարժեքը	100
	4.30 Մայրական տպասալի փոխարինում ներառյալ Մայրական տպասալ Canon iR2230 կամ համարժեքը	100
	4.31 Սկաների բլոկի փոխարինում ներառյալ Սկաների բլոկ Canon 7161 կամ համարժեքը	100
	4.32 Սկաների բլոկի փոխարինում ներառյալ Սկաների բլոկ Canon iR2016 կամ համարժեքը	100
	4.33 Սկաների բլոկի փոխարինում ներառյալ Սկաների բլոկ Canon iR2230 կամ համարժեքը	100
6	**Սառնարանների վերանորոգման և պահպանման ծառայություն**	
	6.1 Դիագնոստիկա	3000
	6.2 Պրոֆիլակտիկա	4000
	6.3 Խցանման վերացում	1000
	6.4 Արտահոսքի վերացում	1000
	6.5 Կոմպրեսորի փոխարինում ներառյալ կոմպրեսորը	3000
	6.6 Ռելեյի փոխարինում ներառյալ ռելեն	2100
	6.7 Ֆեն-շարժիչի փոխարինում ներառյալ պահեստամասերը	4000
	6.8 Կարավառման սալիկի վերանորոգում	1200
	6.9 Էլեկտրոկոնդենսատորի փոխարինում ներառյալ էլեկտրոկոնդենսատորը	1200

- **Վերանորոգման ժամանակ օգտագործվող պահեստամասերը պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:**
- **Սարքերի երկկողմանի տեղափոխումը իրականացնում է կատարողը՝ սեփական միջոցներով:**
- **Անսարքությունները անհրաժեշտ է վերացնել առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011018513
ՀՎՀՀ 02578338

Աշխատակազմի ղեկավար՝
Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Մանվել Ջալավյան Ա/Ձ
ք. Երևան, Մոսկովյան 25, 3/1 տարածք
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050032155921001
ՀՎՀՀ 82934656

Ա/Ձ՝
Մ.ՋԱԼԱՎՅԱՆ

Հավելված N 2
«17» մարտի 2018թ. կնքված
№ ՀՀ-ՏԿԶՆ-ԳՀԾՁԲ-18/1-7/6 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	50771100/1	Անխափան սնուցման սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություն			70000	200000	200000	200000	200000	200000	200000	200000	200000	200000	**200000**
3	50311240/1	Լազերային տպիչների վերանորոգման և պահպանման ծառայություն			50000	125000	125000	125000	265000	265000	265000	400000	400000	400000	**400000**
4	50311240/1	Պատճենահանող սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություն			25000	50000	50000	50000	75000	75000	75000	100000	100000	100000	**100000**
6	50731100/1	Սառնարանների վերանորոգման և պահպանման ծառայություն										100000	100000	100000	**100000**
Ընդամենը՝					***145000***	***375000***	***375000***	***375000***	***540000***	***540000***	***540000***	***800000***	***800000***	***800000***	***800000***

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Վճարումները կատարվելու են փաստացի մատուցված ծառայությունների հիման վրա, բայց ոչ ավել քան տվյալ ամսվա համար սահմանված գումարից:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011018513
ՀՎՀՀ 02578338

Աշխատակազմի ղեկավար՝

Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
Մանվել Ջալավյան Ա/Ձ
ք. Երևան, Մոսկովյան 25, 3/1 տարածք
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050032155921001
ՀՎՀՀ 82934656

«ՄԱՆՎԵԼ ՋԱԼԱՎՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ» "MANVEL JALAVYAN ARSHAVIR" 82934656

Մ.ՋԱԼԱՎՅԱՆ

Հավելված 3
«17» մարտի 2018թ. կնքված
№ ՀՀ-ՏԿԶՆ-ԳՀԾՁԲ-18/1-7/6 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» «_____» 2018թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2018թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«17» մարտի 2018թ. կնքված
№ ՀՀ-ՏԿԶՆ-ԳՀԾՁԲ-18/1-7/6 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն